ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Ширакский центр арменоведческих исследований НАН РА
Shirak Centre of Armenological Studies NAS RA

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ НАУЧНЫЕ ТРУДЫ SCIENTIFIC WORKS

ՀԱՏՈՐ ВЫПУСК EDITION 25 2022 № 2

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ
LITERARY STUDIES

ՀՏԴ՝ 81·3
DOI: 10.52971/18294316-2022.25.2-34

ԳՈՒՆԱՅԻՆ ՄԱԿԴԻՐՆԵՐԸ ԵՂ. ՉԱՐԵՆՑԻ ՉԱՓԱԾՈՅԻ ԼԵԶՎՈՒՄ

Գայանե Ավետիսյան

Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան

Բանալի բառեր՝ *գունային մակդիրներ, պատկերավորություն, փոխաբերություն, ոճական արժեք, խոսքային բազմազանություն, գեղարվեստական ժառանգություն, չափածո, լեզվաոճական առանձնահատկություն, ուղենշային դեմք։*

Սույն հրապարակմամբ նպատակ ունենք ներկայացնելու գունային մակդիրների պատկերավորման առանձնահատկությունները հայ գրականության նորագույն շրջանի ուղենշային դեմքի՝ Եղ. Չարենցի չափածոյի լեզվում՝ կարևորելով գրողի կողմից գործածված մակդիրների իմաստային խորությունն ու բազմազանությունը, նկարագրվող երևույթի բնորոշ կողմերն արտահայտելու հմտությունը։ Քննարկվող թեման արդիական և հետաքրքիր է ինչպես մեծանուն բանաստեղծի՝ իբրև անհատ ստեղծագործողի, այնպես էլ արևելահայ գրական լեզվի գեղարվեստական տարբերակի ոճական հնարավորությունների քննարկման տեսակետից։ Եղ. Չարենցի պոեզիայի պատկերավորման համակարգում մեծ տեղ զբաղեցնող գունային մակդիրների կիրառությունը խոսքի գեղարվեստականությունն ապահովող պատկերավորման հզոր միջոց է։

Նախաբան. Եղ. Չարենցը գեղարվեստական խոշոր անհատականություն է, որի բանաստեղծական խոսքը, ոճական հնարանքների բազմազանությունն ու լեզվական բարձր արվեստը խոր ազդեցություն են թողել հայ գրական լեզվի զարգացման ընթացքի վրա[1]։ Գ. Գլազովը Չարենցի մասին գրում է. «Չարենցն ուներ մի երջանկություն, որը մեզանից ամեն մեկը չէ, որ ունի։ Որպես մեծագույն քաղաքացիական զգացողության բա-

[1] **Մարության Ա. -1979,** էջ 4։

նաստեղծ՝ նա գտավ ծիածանի ութերորդ գույնը: Մեզանից ամեն մեկը կցանկանար գտնել այդ գույնը: Բայց դա կապված է մեծագույն ռիսկի հետ, քանի որ այդ գույնը կարող է ապրել միայն հոգու և մտքի էներգիայի հաշվին, լրիվ ինքնանվիրման և անզիջողության հաշվին»[2]: Բազմազան գույներով ծիածանը սրբացվում է չարենցյան պոեզիայում, որի մեջ բանաստեղծը իր ազգի գույնն է փնտրում և հյուսում: Փոփոխվող գույների համադրության մեջ ծիածանը դառնում է մեծ գրողի հոգու, հույզերի ու խոհերի արտացոլանքը:

Այդ առումով՝ նրա վաղ շրջանի ստեղծագործություններում լայն կիրառություն ունի գույնով բնորոշվող մակդիրների գործածությունը: Հանդիպում ենք միևնույն մակդիրի տարբեր գործածությունների, որոնք առաջ են բերում խոսքի բազմազանություն և գունեղություն՝ միաժամանակ ընդգծելով մեծանուն բանաստեղծի հոգեկան ապրումներն ու հույզերը: Օրինակ՝ *կապույտ աղջիկ, կապույտ երազ, կապույտ կարոտ, կապույտ մորմոք, կարմիր ժպիտ, կարմիր նժույգներ, կարմիր հմայք, ոսկի մշուշ, ոսկի մատներ, ոսկի հուր, ոսկի ամառ, դեղին թախիծ, դեղին մահ, դեղին բանակ, դեղին հրեշ* և այլն:

Ինչպե՞ս երգեմ, չգիտեմ *կարմիր հմայքը* քո այս,
Ինչպե՞ս ասեմ աշխարհին, որ աշխարհում արդեն կաս… ԵՉ -1984, էջ 270

Քամին,
Աշնան քամին
Թռցնում է *դեղին նժույգները* իրա: ԵՉ -1984, էջ 312

Կարմիր նժույգները թռչում են սրընթաց,
Կարմիր նժույգները ՝բաշերը փրփուր: ԵՉ -1984, էջ 272

Երբեմն Չարենցը գունային մակդիրների առանձին տեսակների կիրառությամբ ստեղծում է զանազան տրամադրություններ՝ նպաստելով նույն արմատով կազմված հոմանիշ տարբեր մակդիրների կիրառությանը:

Ու թախիծը- խեղդող, ճնշող,-
Խառնված *ոսկեման հրին*: ԵՉ -1984, էջ 131

Ոչ մի հրաշք էլ ետ չի բերի
Անցած արևի *հուրը ոսկեգույն*: ԵՉ -1984, էջ 238

Չարենցի բանաստեղծական լեզվին բնորոշ են նաև փոխաբերական մակդիրների լայն կիրառությունը, որոնք լեզվին առանձին գեղեցկություն են հաղորդում: Այսպես՝ բնութագրվող առարկայի և փոխաբերական իմաստով գործածված մակդիրի միջև ինչոր համեմատելի կամ նման եզրեր է գտնում՝ գործածելով դրանք առարկայի նկարագրությունը ցայտուն ու տպավորիչ դարձնելու համար:

Սոմա, օ՜, Սոմա, օրհնվի թող այն
Վայրկյանը *կարմիր աշխարհում* այս չար: ԵՉ -1984, էջ 65

Եվ գինին այստեղ ծորում է առատ,
Եվ հարբում ենք մենք *կարմիր խնջույքում*: ԵՉ -1984, էջ 32

[2] Նույն տեղում, էջ 83:

Այս դեպքում *կարմիր* բնութագրումը դառնում է բանաստեղծի հոգին պարուրած ըմբոստ տրամադրությունների դրսևորման ինքնատիպ ձևը:

Խոսքի արտահայտչականության և պատկերավորության նպատակով Չարենցը երբեմն գործածում է բնութագրվող առարկային իմաստով միանգամայն հակադիր մակդիրներ, որոնցով նկարագրվող առարկաներն օժտում է բոլորովին նոր երանգներով ու նոր հատկություններով:

Եվ խավարի մեջ *կարմիր ու կարմիր*

Գնդակներ էին թռչում ու շաչում: ԵՉ -1984, էջ 31

Պատկերավորման առանձնահատկություն է և այն, որ չարենցյան լեզվում գունային մակդիրների կիրառության մի առանձնահատկություն կարելի է համարել նույն ածականի և՛ մակդիրի, և՛ ձևի պարագայի շարահյուսական կիրառությամբ ներկայացնելը: Այդպիսի գունային մակդիրների առատ գործածությամբ բանաստեղծը անհրաժեշտ ոճական երանգավորում է ստեղծել «Մարի, էգ թռչուն», «Վերադարձ», «Ամբոխները խելագարված» և այլ հայտնի չափածո ստեղծագործություններում:

Ե. Չարենցը մեր բանաստեղծական լեզվի մեջ մտցրեց այնպիսի նոր արտահայտություններ ու մակդիրային նոր կապակցություններ, որոնք ինքնատիպություն են հաղորդում ասելիքին: Այս պարագայում զանազան գունային մակդիրները Չարենցի լեզվում ձեռք են բերում ոճական նուրբ արժեք, որոնք առանձնահատուկ խոսքային միջավայր են ստեղծում ընթերցողի համար:

Այսպես՝ «Ծիածան» բանաստեղծական շարքի երգերում գոյանում է նաիրյան թախծի ու գույների նրբին մի շերտ, որտեղ սերը աստղային քրոջ կերպարով ճախրում է երկրի կապույտում, և որը տիեզերական, եթերային տեսիլք է ու պատրանք.

Կապույտ աղջիկ, ագաթի ու կաթի պես հոգեթով,

Լուսամփոփի պես աղջիկ … ԵՉ -1984, էջ 253

Կապույտի մեջ, կապույտի մեջ- արևի ոսկին

-Քնի՛ր, քնի՛ր, *կապույտ աղջիկ*, չզարթնես ծեգին… ԵՉ -1984, էջ 255

Շարքի բանաստեղծություններում աղջկա անկենդան պատկերը կամաց-կամաց հառնում է աշխարհի գույների ու երանգների մեջ, դառնում կապույտ, ոսկի, մանուշակագույն[3]:

Ամբողջ բանաստեղծություններ են կառուցված կապույտի վրա: Այսպես՝

Կապույտը-հոգու աղոթանքն է, քո՛ւյր,

Կապույտը-թախիծ,

Կապույտը- թափանցիկ, մաքուր

Ու հստակ ու ջինջ: ԵՉ -1984, էջ 254

Չարենցի բանաստեղծական շարքում կապույտն ու ոսկին դառնում են հեռուներում մնացած տրտում հուշ, որը պիտի դառնա *մի խամրած մշուշ մանուշակագույն*:

Հաղթահարելով հավերժական կապույտին ձգտող դեգերումները՝ Չարենցը հեղափոխության օրըստօրե խորացող իրադարձությունների մթնոլորտում փոխում է իր պատկերավորման գունային աշխարհը: Կապույտը զիջում է կարմրին, գունատ աղջկա

[3] **ՉԸ -1979,** էջ 66:

փոխարեն՝ ամազոնուհին, վիատ տրամադրության փոխարեն ընդգծվում է զորեղը։ Ծիածանի սառը, տխուր ստվերներն աստիճանաբար տեղի են տալիս լույսի և ջերմության առջև.

Նոր կարոտս հիմա *հուր է կարմիր ու հրդեհ,*

Նոր է հմայքը, որով դու ուզում ես կախարդել։ ԵՉ -1962, էջ 155

Կարմիրը՝ որպես Չարենցի գունային համակարգում հեղափոխության ուժն արտահայտող միջոց, դառնում հեղաշրջումների, կյանքի նորոգման խորհրդանիշ.

Կարմիր նժույգները թռչում են սրընթաց,

Կարմիր նժույգները բաշերը փրփուր։ ԵՉ -1984, էջ 272

Եկել- երկաթե երգ եմ ասում.

Ես-*կարմիր պոետ*-Եղիշե Չարենց։ ԵՉ -1984, էջ 78

Մեծանուն բանաստեղծն իր ժողովրդի հեղափոխական կամքն ու խանդավառությունն արտահայտում է *կարմրով* գունավորված պատկերների միջոցով։

Եվ ո՞վ, ո՞վ կասի՝

Նետել է արդյոք մեկը աշխարհում

Այսօրվա *կարմի՛ր, կարմիր ձեր երթին*

Ողջույն ավելի, առնական, արի,

Քան ողջույնը քո, երկիր արնաքամ,

Կարմիր Նաիրի։ ԵՉ -1984, էջ 80

Ըստ Ավդալբեգյանի՝ Չարենցի ստեղծագործությանը առանձնահատուկ երանգ է հաղորդում նրա բնապատկերային շեշտը, որի հենքում առավել ապշեցուցիչը հայ բնաշխարհի գունային առկայությունն է, երանգապնակը, որը նրան տարբերում է մեր մյուս բանաստեղծներից։ Չարենցի պոեզիան շռայլում է անխառն գունային շարքով. կարմիրը՝ բորբ, կապույտը՝ ջինջ, դեղինը՝ ոսկի[4]։

Ու վառվում է *կապույտում արևի ոսկին. . .* ԵՉ -1962, էջ 60

Ու ճախրում է նա մի *ոսկի թիթեռ,*

Իսկ *երկինքը* կա-ու *կապույտ* է դեռ։ ԵՉ -1962, էջ 61

Չարենցի պոեզիան ունի ընդգծված ազգային գունավորում, նույն կապույտի, ոսկու, մանուշակագույնի՝ բնաշխարհի երանգներն ու դրանցով պայմանավորված միջնադարյան մանրանկարչության գունային ավանդները.

-Խաչը վանքի, երգը զանգի-*կապույտում* վերջին,

Զարթնի՛ր, զարթնի՛ր, *կապույտ աղջիկ,* ու նայի՛ր խաչին։ ԵՉ -1962, էջ 54

Արևն իջավ- մոտ է ծիրին,

Փառք *հրաշեկ երկնավորին. . .* ԵՉ -1962, էջ 117

Ամփոփում. Եղ. Չարենցը անսահման մեծ նորություն բերեց հայ գրականության պատմության մեջ։ Նա ընդլայնեց հայ գեղարվեստական մտածողության տեսադաշտը, պատկերային համակարգը, իր ապրած կյանքի ու իրեն վիճակված ժամանակի մեջ տեսավ անցյալը, ներկան ու գալիքը։ Գունային բազմազանության միջոցով հարս-

[4] **Ավդալբեգյան Մ. -1979,** էջ 267։

տացրեց գեղարվեստական խոսքը և համադրեց հայ ու համաշխարհային գեղարվեստական ժառանգությունը:

Չարենցի բանաստեղծական խոսքը՝ ոճական հնարանքների բազմազանությամբ ու լեզվական բարձր արվեստով, խոր ազդեցություն է թողել ոչ միայն հետչարենցյան բանաստեղծների, այլև հայ նոր գրական լեզվի զարգացման ընթացքի վրա:

ХАРАКТЕРИСТИКА ЦВЕТНЫХ ЭПИТЕТОВ В ПОЭТИЧЕСКОМ ЯЗЫКЕ ЕГИШЕ ЧАРЕНЦА

Аветисян Г.

Ключевые слова: *цветовые эпитеты, иллюстрация, метафора, стилистическое значение, словесное разнообразие, художественное наследие, стих, языковая особенность, лицо ориентира.*

В данной публикации представляются особенности изображения цветных эпитетов в языке стихов Чаренца, знаковой фигуры новейшего периода армянской литературы, подчеркнув семантическую глубину и разнообразие используемых писателем эпитетов, способность выражать характерные стороны описываемого явления. В рамках исследования мы отнеслись к таким употребляемым Чаренцем эпитетам, которые совпадают с данной речевой средой, текстуальными условями.

Обсуждаемая тема актуальна и интересна как с точки зрения обсуждения стилистических возможностей великого поэта Егише Чаренца как индивидуального творца, так и художественной версии литературного языка. Использование цветных эпитетов как средства изображения художественной природы речи занимает большое место в системе иллюстрации Е. Чаренца.

CHARACTERISTICS OF COLOUR EPITHETS IN THE POETIC LANGUAGE OF YEGHISHE CHARENTS

Avetisyan G.

Key words: *colour epithets, illustration, metaphor, stylistic value, verbal diversity, artistic heritage, verse, linguistic feature, guiding face.*

In this publication, we aim at presenting the features of the depiction of colour epithets in the language of Yeghishe Charents verse, the landmark figure of the latest period of Armenian literature, emphasizing the semantic depth and diversity of the epithets used by the writer, the ability to express the characteristic aspects of the described phenomenon. Within the framework of the research, we referred to such epithets used by Yeghishe Charents, which match the given verbal environment, the original conditions.

The topic discussed is actual and interesting both from the point of view of discussing the stylistic possibilities of the great poet Yeghishe Charents as an individual creator and the artistic version of the literary language. The use of colour epithets as a means of depicting the artistic nature of speech occupies a large place in Y. Charents' system of illustration.

Գ ր ա կ ա ն ո ւ թ յ ո ւ ն

1. **Մարության Ա. -1979,** Ե. Չարենցի չափածոյի լեզուն և ոճը, Երևան, «Սովետական գրող», 200 էջ:
2. **ՉԸ -1979,** Չարենցյան ընթերցումներ, 4, Երևան, ԵՀ հրատ., 83 էջ:
3. **Ադալյան Ն. -1976,** Բանաստեղծական պատկերի դիալեկտիկան, Բանաստեղծը և արդիականու - թյունը, Երևան, 66 էջ:
4. **Ավդալբեգյան Մ. -1979,** Չարենցը և հայ հին գրականությունը, Չարենցյան ընթերցումներ,Երևան, ԵՀ հրատ., 267 էջ:
5. **Թամրազյան Հր., Գասպարյան Դ., Քալանթարյան Ժ. -2000,** Հայ գրականություն, 10-րդ դասարանի դասագիրք, Երևան, «Լույս» հրատ.,198 էջ:
6. **Չարենց Ե. -1962,** Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, ԵՀ հրատ., 117 էջ:
7. **Չարենց Ե. -1984,** Երկերի ժողովածու, Երևան, ԵՀ հրատ., 752 էջ:

Ընդունվել է՝ 23.08.2022
Գրախոսվել է՝ 12.09.2022
Հանձնվել է տպ.՝ 28.11.2022

Տեղեկություններ հեղինակի մասին

Գայանե ԱՎԵՏԻՍՅԱՆ՝ մանկավարժական գիտությունների թեկնածու,
Շիրակի պետական համալսարանի գրադարան-ուսումնագիտական
խորհրդատվությունների և ՏՏ կենտրոնի առաջատար մասնագետ,
էլ. հասցե՝ gayaneavetisyan2@gmail.com